

**Հայաստանի Շախմատային Ֆեդերացիայի Մարզչական
(Մանկապատանեկան) Հանձնաժողովի Որոշումը
մարզիչների փոփոխության, մարզիչների խրախուսման կարգի մասին**

1. Մեկ դպրոցից մեկ այլ դպրոց, մեկ մարզիչից մեկ այլ մարզչի մոտ մարզիկների փոփոխությունները կատարվում են տարեկան երկու անգամ. գարնանը՝ Հայաստանի առաջնությունից և աշնանը՝ Եվրոպայի և աշխարհի առաջնություններից հետո: Դիմումները ներկայացվում են Հայաստանի շախմատային ֆեդերացիայի մարզչական (մանկապատանեկան) հանձնաժողով՝ մեկամսյա ժամանակահատվածում:

2. Դպրոցները, մարզիչները, մարզիկները իրենց աշխատանքային հարաբերությունները կանոնավորում են պայմանագրային հիմունքներով:

3. Մարզիկը պետք է ներկայացնի մեկ շախմատային դպրոց և ունենա մեկ պաշտոնական մարզիչ: Վերջինս էլ կրում է լիակատար պատասխանատվություն պաշտոնական մրցաշարերին մարզիկի նախապատրաստության և մասնակցության համար:

4. Դպրոցները և մարզիկները կարող են համագործակցել այլ դպրոցների և մարզիչների հետ, որոնք կրում են ներքին, ոչ պաշտոնական բնույթ:

5. Գործելու է մարզիչների խրախուսման հստակ կանոնակարգ.

- ներքին պաշտոնական մրցաշարերում, որտեղ մարզիկները պարգևատրվում են դիպլոմներով կամ պատվոգրերով, նույնպիսի պարգևատրություն նախատեսել մարզիչների համար:

- 6 ամսից մինչև 2 տարի մարզչական աշխատանքի դեպքում մարզիչի անունը պաշտոնապես պետք է հիշատակել մարզիկի ելույթների հաջորդ 1 տարվա, 2-ից 5 տարիների դեպքում՝ հաջորդ 3 տարիների ընթացքում:

- դրամական խրախուսումների դեպքում մարզիչները պարգևատրվում են՝ հաշվի առնելով մարզիկի պատրաստության մեջ իրենց ունեցած ներդրման չափը: Որպես գնահատական կարող է կիրառվել նախորդ կետում նշված ժամանակակարգը: Յուրաքանչյուր դեպքում Հայաստանի շախմատային ֆեդերացիան կարող է կայացնել իր հատուկ որոշումը:

6. Մարզիկների ելույթների, մարզիչների աշխատանքի մասին ինֆորմացիան կանոնակարգելու նպատակով ստեղծել համակարգչային բազա: Այդ հաշվառումը սկսել 3-րդ կարգային մարզիկներից: